Известия АН Армянской ССР, Науки о Земле, 6, 94—95, 1971

НАУЧНАЯ ХРОНИКА

Ֆ. Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ՄԱՄ) ԵՎՐՈՊԱՅԻ ՌԵԳԻՈՆԱԼ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԱՍԻՆ

1971 թ. օգոստոսի 10-15-ը Բուդապեշտում կայացավ ՄԱՄ-ի Եվրոպայի ռեգիոնալ կոնֆերանսը։ Կոնֆերանսին մասնակցում էին 1000-ից ավելի աշխարհագրագետներ Եվրոպայի, ինչպես նաև Ասիայի ու Ամերիկայի ավելի քան 40 երկրներից։ Սովետական Միության պատվիրակության կազմում կար 120 աշխարհագրագետներ, որից 10-ը Հայկական ՍՍՀ-ից։

Կոնֆերանսի աշխատանքները համընկան Հունգարիայի աշխարհագրական ընկերության հիմնադրման 100-ամյակին։ Կոնֆերանսի բացումը տեղի ունեցավ Բուդապեշտի կոնգրեսների պալատում. այն բացեց Հունգարիայի գիտությունների ակադեմիայի նախագահ Էրդեյ-Գրուզ Տաբորը։ Հունգարիայի կառավարության անունից կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց ՀԺՀ-ի Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Մ. Այտային, Բուդապեշտի գործադիր կոմիտեի անունից՝ նրա նախագահ Զ. Սեպվելդին։ Հունգարիայի աշխարհագրական ընկերության 100-ամյա գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ նրա պրեզիդենտ Լայոշ Կադարը։ Նա հանդամանորեն բնութագրեց ընկերության գործունեության հիմնական էտապները և հատկապես նշեց երկրում ժողովրդա-դեմոկրատական կարգեր հաստատվելուց հետո հունգար աշխարհագրագետների ներդրումները ժողովրդատնտեսական կարևոր պրոբլեմների լուծման գործում։ ՀԺՀ-ի կառավարությունը բարձր գնահատելով ընկերության կատարած աշխատանքը, նրա զեկավարներին ընկերության 100-ամյակի կապակցությամբ պարգևատրեց երկրի բարձրագույն շքանշաններով։ Հունգար աշխարհագրագետներին այդ կարևոր տարելիցի առթիվ ողջույնի խոսքեր ասացին տարբեր երկրների և կազմակերպությունների պատվիրակները։ Սովետական Միության աշխարհագրագետների կողմից ողջույնի խոսք ասաց պրոֆ. Կ. Սալիշչևը։ Հայկական աշխարհագրական ընկերության կողմից հունգարական աշխարհագրական ընկերությանը հանձնվեցին հուշանվերներ՝ ՀՍՍՀ-ի ատլասը, «Հայաստան» մենագրությունը և այլն։

Օգոստոսի 11-ից կոնֆերանսի 7 սեկցիաներում («Մարդը և միջավայրը», «Եվրոպայի ռելիեֆի դինամիկան և նրա էվոլյուցիայի կանխատեսումը», «Ռեգիոնալ զարգացումը, ռեգիոնալ պլանավորումը և աշխարհագրական միջավայրը», «Թեմատիկ քարտեզագրումը Եվրոպայում», «Գյուղատնտեսության տոպոլոգիան և գյուղական բնակավայրերը», «Ուրբանիզացիա», «Աշխարհագրության դասավանդման մեթոդները») լսվեցին և քննարկվեցին շուրջ 250 զեկուցումներ՝ նվիրված ժամանակակից աշխարհագրության հրատապ հարցերին։ Կոնֆերանսի տարբեր սեկցիաներում ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին հայ աշխարհագրագետները։ Ֆիզիկա-աշխարհագրական շրջանացման սեկցիայի նախագահներից մեկն էր հանդիսանում ՀՍՍՀ ԳԱԱ թղթակից-անդամ, պրոֆ. Ա. Բ. Բաղդասարյանը։ Հայ աշխարհագրագետները կոնֆերանսում կարդացին 7 զեկուցում (ներկայացված էր 8-ը)։ «Լեռնային լանդշաֆտները և հան-

գստի պրոբլեմները» թեմայով զեկուցում կարդացին Ա. Բ. Բաղդասարյանը և Ռ. Հ. Բաղդասարյանը։ Ա. Բ. Բաղդասարյանի, Լ. Հ. Վալեսյանի և Ն. Յ. Բարսեղյանի համատեղ զեկուցումը նվիրված էր սպուտնիկային կոմպլեքսների քարտեզագրման փորձին։ Արդի լեռնային երկրների ջրային տնտեսության աշխարհագրական պրոբլեմներին էր նվիրված Լ. Հ. Վալեսյանի զեկուցումը։ Հ. Ղ. Գրիգեարյանի և Ռ. Հովեսյանի զեկուցումը նվիրված էր սպասարկման ոլորտի քարտեզագրման փորձին։ Պրոֆ. Հ. Կ. Գաբրիելյանի զեկուցումը նվիրված էր Կովկասի դենուդացիայի քանակական բնութագրմանը։ Պրոֆ. Ս. Պ. Բալյանի զեկուցման մեջ հանգամանորեն վերլուծության ենթարկվեցին Հայկական լեռնաշխարհի մորֆոստրուկտուրայի հիմնական գծերը և առանձնահատկությունները։

Կոնֆերանսում բացվել էր ատլասների, քարտեզների և աշխարհագրական դասագրքերի հարուստ ցուցահանդես։ Բացի կոնֆերանսից, Բուդապեշտում և երկրի մյուս քաղաքներում (Դեբրեցեն, Պեչ, Սեգեդ, Վեսպրեմ) կազմակերպվեցին սիմպոզիումներ տարբեր պրոբլեմների շուրջը (Դանուբի, կարստի մորֆոգենեզի, լյոսի, գյուղատնտեսության տիպոլոգիայի և գյուղական բնակավայրերի, տնտեսության ռեգիոնալ զարգացման բնական գործոնների և այլն)։ ՄԱՄ-ի «Մարդը և միջավայրը» հանձնաժողովի կողմից կազմակերպվեց նաև սեմինար «Տարերային աղետներ» թեմայով։

Կոնֆերանսի, սիմպոզիումների, ինչպես նաև էքսկուրսիաների ընթացքում տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակություն տարբեր երկրների մասնագետների միջև։